

ՀԱՅ ԿՆՈՋ ՄԸ ԵԹԵՐԱՅԻՆ ԶԱՅՆԸ

ՆԻԻ ԵՈՐՔԻ ԵՐԿՆԱԿԱՄԱՐԻՆ ՎՐԱՅ

Ամէն շաբաթ օր կէսօրէն վերջ ժամը ճիշտ 5,30ին աւելի քան 30.000 հայեր, յոյներ, սիւրիացիներ և ուրիշ արեւելեան ժողովուրդներ լարուած աւանջներով իրենց ռատիոներուն առջեւ կը սպասեն որպէս զի հայ կնոջ մը գիւթական ձայնը լսեն եթերին մէջէն:

Ամերիկայի վերժանողը կը բացատրէ. «Եւ

այժմ ձեզի կը ներկայացնեմ ձեր շնորհալի բարեկամուհին Օր. Տիանա Սարգիսը...»:

Յետոյ կանացի քաղցրահնչուն ձայն մը աւանջաբար օր կանոնաւորաբար կ'ողջունէ իր բազմազաղար ունկնդիրները հայերէն ոսկեղէնիկ լեզուով.

«Բարեւ ձեզի, սիրելի հայրենակիցներ...»

Ութը միլիոնէ աւելի բնակչութիւն ունեցող Նիւ Եորքի մէջ, որուն երկնակամարը գրեթէ չորթմայուած է ամերիկեան վիթխարի ռատիոկայաններու ալիքային ցանցով, հրաշքի մը պէս կը լսուի հայ կնոջ այս ծանօթ ու մտերիմ ձայնը, որ 1942-էն ի վեր առանց ընդհատումի հնչած է նախ WBNY և աւելի յետոյ WEVD Ռատիոկայաններէն:

Բազմալեզու և օտարաշունչ քաղաքի օդային ալիքներուն մէջէն յետոյ կը լսուի «Չան Հայաստան», և կամ Խաչատուրեանի, Սպենդիարեանի, Տէր Ղեւոնդեանի հայկաշունչ ու արեւելեան երգերուն գունավառ հարսանիքը:

Յայտագիրը կը փոխուի ու ձեր աւանջները կը հրճուին երբ հայ երգիչներու ու երգչուհիներու շարան մը ձեզի կու տայ հայերէն և ազգային երգերու զգայանոյշ դիւթանքը.

«Եւ հիմա ձեզի պիտի երգեն, սիրելի հայրենակիցներ, Անիթա Աճեմեան, Հայկ Աւպերեան, Արփինէ Եղիկեան, Նուրի Ճորճուրեան, Քլարա Յովսէփեան, Պօյաճեան, Ֆերտինանտ Գայմազեան...»

Ու եթէ կ'ուզէք Տիանա Սարգիս գաշնակի մենանուագներով ձեզի



Տ Ի Ա Ն Ա Ս Ա Ր Գ Ի Ս

կը հաղորդէ իր մտաներուն մոգական հպումը: Դաշնակահարուհի է Տիանա Սարգիս, երաժշտագէտ և արուեստագիտուհի է այս անգլագական հայուհին՝ որ բացառիկ գերք մը կը գրաւէ ամերիկահայերուն մէջ. իբրեւ առաջին ձեռնէրէց հայուհին, որ ամերիկեան այս կլանող աշխարհին մէջ ունի իր առանձին Ռատիոժամը Հայկական ռատիոժամը, և որուն կորովին ու նախաձեռնութեան շնորհիւ հայ լեզուն և հայ երգը ամէն շաբաթ կը թրթռան Նիւ Եորքի երկնակամարին վրայ:

Հայկական ռատիոժամի տէրն ու վարիչը Տիանա Սարգիս, մօտէն տեսնելու և խօսելու առիթն ունեցանք՝ երբ անիկա այցելութեան եկաւ մեզի պատմելու համար իր զմայլելի գործին մասին:

Տիանա Սարգիս, այս Իզմիրցի հայուհին, խորապէս կը սիրէ իր գործը և խանդավառութեամբ համակուած է անոր հանգէս: Անիկա կը սիրէ զայն, որովհետեւ կ'ըմբռնէ թէ ազգային, ընկերային և մշակութային որպիսի հսկայ ու նշանակալից գեր մը վերապահուած է իրեն:

Տիանա Սարգիս մեզի կը բացատրէ թէ Ռատիոյի միջոցով կարելի է հասնիլ տանեակ հաղարւոր հայերու, որոնցմէ շատեր հայկական կեանքին հետ սերտ կապ չունին և շատ քիչերն են որ հայերէն գերք կամ թերթ կարդալու սովորութիւն ունին: Հայկական ռատիոժամը իր հայկական յայտագրով՝ ուժանալու գաղափարով ապրումաւ ապր զանգուածը՝ հոգիով իրարու կը շարկապէ և զայն աւելի կը մօտեցնէ հայութեան և մայր հայրենիքին:

Հայկական ռատիոժամը լսող հայու մէջէն կը չքանայ ստորագասութեան զգացումը, ուրովհետեւ գիտէ կու տայ մեզի Օր. Տիանա Սարգիս՝ որ ունկնդիրը կը զգայ թէ ուրիշ փոքրամասնութեանց կարգին հայն ալ ինքզինքը լսելի կը դարձնէ իր ազգային առանձնայատկութիւններով ու գեղեցիկ մշակոյթով: Այս պարագան շատ կարեւոր է, որքան հին աւելի էս նոր սերունդին համար, որոնք հայերէն լեզուն, հայկական երգը լսելով ռատիոյի վրայ՝ հպարտութեամբ և ազգային գիտակցութեամբ կը համակուին:

Տիանա Սարգիս մասնաւորապէս կը շեշտէ իր ռատիոժամին հայրենասիրական գերքը: Հայութեան, Հայրենիքին և Գաղութահայութեան

մասին արուած ազգային լուրերը, գիտել կու տայ ան, կասկած չկայ որ կենդանի կը պահեն հայրենասիրութեան կրակը և մեր ժողովուրդը իրարու կը զօգէ մօտեցնելով իրարու գաղութները:

Հայկական երաժշտութեան տարածման մէջ ալ խոշոր գեր մը կատարած է Հայկական ռատիոժամը: Հայաստանէն ստացուած երգապնակները և երաժշտական գործերը առաջին անգամ ըլլալով ծանօթացնելով Նիւ Եորքի և շրջակայքի հայութեան, որ այլապէս հազիւ պատեհութիւնը պիտի ունենար լսելու կամ սորվելու այդ երգերը:

Պէտք է նշել որ Տիանա Սարգիս լիութի գնահատուած է իր կատարած այս գեղեցիկ ու բացառիկ նշանակութիւն ունեցող գործին պատճառով և անսահման ժողովրդականութիւն կը վայելէ ոչ միայն իր հայրենակիցներուն այլ և իր յայտագիրը լսող արեւելեան ուրիշ ժողովուրդներու կողմէ, որոնք հեռաձայնով և անթիւ նամակներով իրենց գոհունակութիւնը և գնանաւանդներով իրենց գոհունակութիւնը կը յայտնեն իրեն:

Հայկական շրջանակներու մէջ Տիանա Սարգիս խորունկ համակրութեան և սիրոյ առարկան կը դառնայ ամէն առիթով որ շփման կու գայ ժողովուրդին հետ:

Իրեն անձամբ անձանօթ հայ մամիկներ երբ Տիանա Սարգիսին կը հանդիպին առաջին անգամ՝ զայն կը շրջապատեն և իրենց ինքնաբերական զգացումներուն խօսուն արտայայտութիւնը կը տեղան:

«Քու այդ հայերէն խօսող լեզուդ սիրեմ. Ստանդ ըլլամ քեզի, իմ անոյշ աղջիկս. Աստուած պահէ քեզ, օրերդ աւելցնէ: Եթէ աչքի առջեւ ունենանք այն բոլոր նիւթական ու բարոյական արգելքները՝ որոնց յաղթահարելով Տիանա Սարգիս յաջողած է գործօն պահել Հայկական ռատիոժամը, թեւս սովորական գնահատական բառերէն աւելին արժանի պիտի հռչակէինք այս փայլուն հայուհին:

Հոն ուր ուրիշներ ձախողեցան, Տիանա Սարգիս արդէն իսկ խոշոր յաջողութիւն մը ապահովել է այսօր: Անիկա ոչ միայն աշակերտաբարութեանց գնով յաջողած է WEVD Ռատիոկայանէն ապահովել իր կէս ժամը, այլեւ Ռատիոկայանէն ապահովել իր Հայկական ռատիոժամը տարիներու ճիգով իր Հայկական ռատիոժամը, որ դարձուցած է տեսակ մը հաստատութիւն, որ

